«Վան» բնակելի թաղամասի կառուցման ներդրումային ծրագիր

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Երևանի Դավթաշեն վարչական շրջանում (հասցե՝ Եղվարդի խճուղի 22) կառուցել նոր բնակելի թաղամաս, որում նախատեսված է 2-3 հարկանի 81 առանձնատուն: Բոլոր առանձնատներն ունեն անհատական ջրամատակարարման, ջրահեռացման, հակահրդեհային համակարգեր և դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված է ավտոհանգրվան: Թաղամասում նախատեսվում է ընդարձակ այգի, սպորտային խաղերի հրապարակ, կապահովվի ամբողջ տարածքի լուսավորությունը, կանաչապատումը և պարսպապատումը:

Թաղամասի տարածքում կլինի նաև երեխաների համար նախատեսված խաղահրապարակ, հեծանիվների արահետ, ինչպես նաև ունիվերսալ խաղադաշտ (ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, թենիսի և բադմինտոնի համար նախատեսված խաղահրապարակներ):

Տեխնիկական ցուցանիշներ	Հողամասի ընդհանուր մակերեսը, որի վրա նախագծված է թաղամասը, կազմում է 25 577քմ: Առանձնատների մակերեսները տատանվում են 138-372 քմ սահմաններում: Սպորտային խաղերի համար հրապարակի ընդհանուր մակերեսը կազմում է 1 500 քմ:

Ծրագրի ժամկետներ	Շինարարական աշխատանքների առաջին փուլի ավարտը նախատեսվում է 2017թ., իսկ երկրորդ փուլի ավարտը՝ 2018թ.:
Ծրագրի արժեքը	Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 15.5 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի՝ «Ծուպանի» ՍՊ ընկերության կողմից:
Ներկա իրավիճակ	Ընթացքի մեջ են կառույցի երկաթ-բետոնե հիմնակմախքի իրականացման աշխատանքները: